

**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր ՈՒ Մ**  
**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ**  
**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ N 02574465-ԱՊ**  
**ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
22/07/2025թ.

ՀՀ առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Ապահովագիր)՝ ի դեմս գլխավոր քարտուղար Վարդանուշ Գրիգորյանի մի կողմից, և «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ապահովագրող)՝ ի դեմս գործադիր տնօրեն Արման Դադունցի մյուս կողմից, հետագայում երկու կողմերը միասին կանվանվեն «Կողմեր», կնքեցին 07/04/2025թ.-ին կնքված սոցիալական փաթեթի շահառուների առողջության ապահովագրության N 02574465-ԱՊ պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու վերաբերյալ սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

- Հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2025 թվականի հուլիսի 21-ի N 4414- Լ հրամանը՝ Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.
  - Պայմանագրի N 2 Հավելվածում կատարել փոփոխություն՝ համաձայն N 1 հավելվածի:
  - Սույն համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխություններով պայմանավորված՝
    - Պայմանագրի 5.2 կետում «282 770 000 000 ՀՀ դրամ» բառերը փոխարինել «292 580 000 000 ՀՀ դրամ» բառերով,
    - Պայմանագրի 6.2 կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ «2025 թվականի հաշվարկային պայմանագրային գումարը կազմում է 1 021 191 736 ՀՀ դրամ»:
    - Պայմանագրի 11.1 կետում «30/06/2025թ.» ամսաթիվը փոխարինել «30/09/2025թ.» ամսաթվով:  
Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում 01/07/2025թ. ժամը՝ 00:01-ին և ավարտվում 30/09/2025թ. ժամը՝ 23:59-ին:
- Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, համաձայնում են, որ սույն համաձայնագիրը տարածվում է միմյանց միջև 2025թ.-ի հուլիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:
- Սույն համաձայնագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

**ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ**

**ԱՊԱՀՈՎԱԴԻՐ**

**«ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ**

**Հայաստանի Հանրապետության  
առողջապահության նախարարություն**

Հասցե՝ ք. Երևան, 0010, Հյուսիսային պողոտա 10 ս. 1  
Հեռ.՝ + 374 10 56 04 04  
Էլ. փոստ՝ info@armeniainsurance.am  
Բանկ՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ  
Բանկային հաշիվ՝ 2470101744870040  
ՀՎՀՀ՝ 02574465

Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3  
Հեռ: +374 60 80-80-03  
Էլ. փոստ՝ info@moh.am  
Բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի  
գործառնական վարչություն  
Բանկային հաշիվ՝ 900011105013  
ՀՎՀՀ 02507171

**Գործադիր տնօրեն՝  
Արման Դադունց**

**ՀՀ առողջապահության նախարարության  
գլխավոր քարտուղար՝ Վարդանուշ Գրիգորյան**

Հավելված N 1  
 Սոցիալական փաթեթի շահառուների  
 առողջության ապահովագրության պայմանագրում  
 փոփոխություններ կատարելու վերաբերյալ  
 22/07/2025թ. կնքված համաձայնագրի

Հավելված N 2  
 Սոցիալական փաթեթի շահառուների  
 առողջության ապահովագրության պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ**

(ՀՀ դրամ)

Ծրագրային դասիչ	Ծրագրի անվանումը	Վճարման ենթակա ապահովագրավճարի մասնաբաժինները և դրանց համապատասխան վերջնաժամկետները											
				մինչև 2025թ. ապրիլի 30-ը	մինչև 2025թ. Մայիսի 31-ը	մինչև 2025թ. Հունիս 30-ը	մինչև 2025թ. օգոստոսի 31-ը	մինչև 2025թ. սեպտեմբերի 30-ը	մինչև 2025թ. հոկտեմբերի 30-ը			Ընդամենը տարի	
1207- 11004	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ			264 604 200	531 338 900	608 519 893	842 879 935	939 201 401	1 021 191 735				<b>1 021 191 735</b>

**Ապահովագրող**

(ստորագրությունը)

**Ապահովադիր**

(ստորագրությունը)